կրէյսեր:

Իսկ այժմ ամեն-ինչ հանգիստ է ու խաղաղ: Լսւում է միայն ջրերի ճողփիւնը մօտից սլացող ջօնկի տակ, եւ կրկին լուռ է:

Խարիս ձգեցինք:

Ճապոնական նաւակների, «ֆունէների» մի ամբողջ արշաւ շրջապատում է մեզ ու տիրում է մեր նաւին:

Ամեն կողմից առջեւդ բուսնում են փոքրիկ շարժուն մարդիկ իրենց երկար շորերով ու խոր ծունկի տալով՝ բարեւում են քեզ իրանց բարի ժպիտովը:

Ոմանք գալիս են յանձնարարական քարտերով, որոնց վրա գրւած է ռուսերէն, թէ պ. Տակասիմա կամ Մերուտակի լաւ լւացք է անում, արագ ու վարպետօրէն կարում է հագուստ, կամ կարող է հիանալի առաջնորդ դառնալ ու ցոյց տալ քաղաքի բոլոր նշանաւոր տեղերը:

Քարտի տակը փայլում է յանձնարարողի ստորագրութիւնը, սովորաբար մի ծովային սպայի:

Սակայն խուժողների մեծ մասը ապրանք է բերում: Նրանք տիրապետում են տախտակամածին, բաց են անում իրանց անհամար կապոցները արկղիկները, եւ ճամփորդի զարմացած հայեացքի դիմաց դուրս են գալիս մէկը միւսի ետեւից սիրուն օրիժինալ փոքրիկ իրեր:

Տախտակամածը ամբողջովին մի եռուն խանութի է փոխարկւում: Ամեն կողմ կանոնաւոր կերպով շարւած են յատակին սափորներ, ալբոմներ, արկղիկներ, եւ նրանց մօտ ճապոնացին, որ ծունկի նստած հանգիստ սպասում է յաճախորդին: